ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-00-70,
Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

թիվ 740-18
12 նոյեմբերի, 2018թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ Ա. Ղուկասյանին

Հարգելի՝ պարոն Ղուկասյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 2018 թվականի N 199-ից N 203 որոշումները:

Առդիր՝ 6 էջ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Ն. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

6 նոյեմբերի 2018 թվականի, N 199-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01 հունիսի 2010 թվականի թիվ 186-Ն հրամանի, ի կատարումն Օձուն համայնքի ավագանու 02 նոյեմբերի 2018 թվականի, թիվ 73-Ա որոշման՝

որոշում եմ.

հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Օձուն բնակավայրի կադաստրային քարտեզի 06-112-0209-0532 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի հողատեսքի, 1.6566 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ հողամաս) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի և քաղաքացի Օրբելի Թարմինյանի միջև կնքված վարձակալության պայմանագրի առարկան և իրականում այն օգտագործվել և օգտագործվում է նույնպես որպես վարելահող, հիմք ընդունելով վարելահողի վարձկալության պայմանագիրը (երկու անգամ անշարժ գույքի վարձակալության իրավունքը վերագրանցվել է որպես վարելահող), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20092018-06-0013 վկայականը՝

1. Օձուն համայնքի կադաստրային քարտեզագրման և անշարժ գույքի առաջին պետական գրանցման նախապատրաստական աշխատանքների ժամանակ թույլ տրված անճշտության հետևանքով որպես հատուկ պահպանվող տարածքների հողատեսքի սխալ հաշվառված հողամասը դարձնել գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող :
2. Սույն որոշմամբ սահմանված հողամասի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., նոյեմբերի 6,
«Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2018 թվականի, N 200-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների եվ այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման՝

որոշում եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի 4-րդ փողոցի մասնակի վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքների համար տալ շինարարության թույտվություն:

2. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանքներ իրականացնել բացառապես ճարտարապետահատակագծային առաջադրանքով ամրագրված պարտադիր պայմանների, պահանջների ու սահմանափակումների հիման վրա մշակված և սահմանված կարգով համաձայնեցված ու հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ տվյալ օբյեկտի համար նախատեսված տարածքում:

3. Մինչև շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ:

4. Կառուցապատումն ավարտել տվյալ քաղաքաշինական գործունեության համար շենքերի, շինությունների և կառուցվածքների շինարարության տևողության նորմերով հաշվարկված ու շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում և ապահովել ավարտված շինարարական օբյեկտի շահագործման փաստագրումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., նոյեմբերի 7,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2018 թվականի, 201-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-074-000041 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 02 փետրվարի 2002 թվականի N 88 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմնբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

որոշում եմ.

հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 1332244 վկայականը, քաղաքացու դիմումը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Օձուն բնակավայրի կադաստրային քարտեզի 06-112-074-000041 ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման, 0,153 հեկտար մակերեսով հողամասում գտնվող 76.2 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի գործառնական նշանակությունը փոխել անասնագոմի (որպես անասնագոմ օգտագործելու նպատակով) գործառնական նշանակության :

2. Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը և փոփոխված գործառնական նշանակության համապատասխան օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:.

3. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Օձուն համայնք, գյուղ Օձուն, 31-րդ փողոց, թիվ 2:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., նոյեմբերի 7,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2018 թվականի, 202-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրությունների անցկացման համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի տարածքում տեղամասային կենտրոններ սահմանել՝

1) «Այգեհատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Այգեհատ, 7-րդ փողոց, շենք 1),

2) Արևածագի մշակույթի տան շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Արևածագ, 3-րդ փողոց, շենք 11),

3) «Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Ծաթեր, 7-րդ փողոց, շենք 10),

4) «Կարմիր Աղեկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Կարմիր Աղեկ, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, շենք 1),

5) Հագվի գյուղի համայնքային կենտրոնի դահլիճի շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Հագվի, 2-րդ փողոց, շենք 9/1),

6) «Մղարթի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Մղարթ, 8-րդ փողոց, շենք 4),

7) «ՀՀ Լոռու մարզի Օձունի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Օձուն, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, շենք 1),

8) «Օձունի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Օձուն, 3-րդ փողոց, շենք 2),

9) «ՀՀ Լոռու մարզի Օձունի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Օձուն, 8-րդ փողոց, շենք 7),

10) «Արդվու հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Արդվի, 1-ին փողոց, շենք 3):

2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 25 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., նոյեմբերի 7,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2018 թվականի, 203-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., նոյեմբերի 7,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի
2018 թվականի նոյեմբերի 7-ի N 203-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՏԵՂԵՐ

1. «Հովհան Օձնեցու անվան» հրապարակի հարավային մաս՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Օձուն, փողոց 4, N 4,

2. Օձունի նախկին խորհրդային տնտեսության պահեստի շենքի արևմտյան ճակատային մաս՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Օձուն, փողոց 5, N 69,

3. Օձունի «Սադի Խանութի» հրապարակի հարավային մաս՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Օձուն, փողոց 1, N 48,

4. Ամոջ գյուղի հրապարակի արևմտյան մաս՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Ամոջ փողոց 1, N 48,

5. Այգեհատի մշակույթի տան շենք՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Այգեհատ, փողոց 7, N 8,

6. Արդվի գյուղի բժշկական ամբուլատորիայի շենք՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Արդվի, փողոց 1, N 3,

7. Արդվի գյուղ, խանութի շենք՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Արդվի, փողոց 1, N 3/1,

8. Արևաձագ գյուղի կանգառ՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Արևաձագ, փողոց 4, N 12,

9. Արևաձագ գյուղի նախկին շրջկոպի շենք՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Արևաձագ, փողոց 4, N 20,

10. Կարմիր Աղեկ գյուղ, խանութի շենք՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Կարմիր Աղեկ, փողոց 2, N 2,

11. Ծաթերի մշակույթի տան շենք՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Ծաթեր, փողոց 7, N 2,

12) Մղարթ գյուղի նախկին ավտոպարկի շենք՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Մղարթ, փողոց 8, N 1,

13) Մղարթ գյուղի նախկին խանութի շենք՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ գյուղ Մղարթ, փողոց 4, N 2,

14) Հագվի գյուղի համայնքային կենտրոնի դահլիճի շենք՝ հասցեն ՀՀ Լոռու մարզ, գ. Հագվի, 2-րդ փողոց, շենք 9/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ